

По приказу правительства Республики Армения 14 апреля того же года со стороны Зангезура в Арцах вошли армянские войска под командованием Дро, и в течение 3-4 дней освободили провинцию от врага. По его инициативе было создано Временное правительство Арцаха. 9-й Конгресс арцахских армян с участием Дро вновь объявил о воссоединении с Арменией.

В начале марта 1920 года из территории Советского Азербайджана войска 11-й Красной Армии вторглись в Нагорный Карабах. 5 марта представители С. Орджоникидзе от имени Советского правительства потребовали от Дро вывести армянскую военную силу из Арцаха. Трезво оценив тонкость и опасность ситуации, Дро передает власть армянским большевикам и 26 марта со своим войском переходит в Зангезур.

## **ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆԻ ԴԵՐԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՆՐԱՅՈՂԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

**Ա. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Պատմական գիտությունների թեկնածու,  
Գավառի պետական համալսարանի դասախոս*

Արդի ժամանակաշրջանին բնորոշ է տեղեկատվական ոլորտի թռիչքաձև զարգացումը: Բոլորս քաջ գիտակցում ենք, որ այդ պայմաններում յուրաքանչ-յուր պետության անվտանգությունն ու առաջընթացը մեծապես պայմանավորված է տեղեկատվական համակարգերի զարգացման մակարդակով: Ներկա իրականությունում դժվար է պատկերացնել մարդկային հասարակության գործունեության որևէ բնագավառ, որտեղ հնարավոր լինի տեղեկատվության առավել արագ ստացում և արդյունավետ աշխատանքի կազմակերպում, ինչպես դա կատարվում է տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով: Չնայած այս ոլորտում առկա բազմաթիվ դժվարություններին ու բարդություններին, այնուամենայնիվ որոշակի առաջընթաց նկատելի է: Դրա լավագույն վկայությունը վերջին տարիներին ինտերնետ կապի լայն տարածումն է, ինչը բազմաբովանդակ ասպարեզներ է բացել հաղորդակցման ընդլայնման և տեղեկությունների հանրայնացման ու դրանցից օգտվողների մեծաքանակ բանակի ձևավորման համար: Առաջընթացի այս ալիքը թափանցել է նաև մշակույթի բնագավառ: Ներկայումս համակարգչային տեղեկատվական համակարգերը կարևոր խթան են ծառայում նաև մշակույթի պահպանման և զարգացման համար: Հիշյալ տեխնոլոգիաներն ի զորու են ապահովելու մշակույթային ժառանգության անվտանգ, հարմարավետ ուսումնասիրման ու օգտագործման հնարավորությունն ու անմախաղեպ կերպով մեծացնելու հետազոտական տեղեկատվության հասանելիությունը: Դրանց դերը մեծապես կարևորվում է նաև այն առումով, որ այդ համակարգերն անսահմանափակ հնարավորություններ են ստեղծում մշակույթային ժառանգության պահպանության, հրապարակման և հանրահռչակման համար՝ առավելա-գույնս խնայողաբար օգտագործելով մարդկային, ֆինանսական ու տարածքա-

մակերեսային ռեսուրսները: Միաժամանակ հարկ է նշել, որ ժամանակակից տեղեկատվական համակարգերը ապահովում են նաև տեղեկատվության ազատություն, այսինքն՝ դրա տրամադրման մատչելիություն ու հրապարակայնություն, այն փնտրելու և ստանալու հնարավորություն: Ակնհայտ է նաև այն, որ վերոհիշյալ պայմաններն ու կարողություններն էապես նպաստում են արդյունավետ փոխհամագործակցությանը և մշակույթների զարգացմանն ու փոխհարստացմանը:

Ակնհայտ է, որ սեփական մշակութային ժառանգության պահպանումը ցանկացած ժողովրդի և պետության գերակա, առաջնահերթ խնդիրներից է: Այն ներառում է մի շարք գործընթացներ, ինչպիսիք են՝ այդ ժառանգության մաս կազմող առանձին արժեքների գրանցում-հաշվառումն ու վերահաշվառումը, գիտական ու ֆիզիկաքիմիական հետազոտությունն ու մշակումը, ամրակայումն ու վերականգնումը, հրապարակումն ու ցուցադրումը և այլն: Նշված գործընթացները փոխկապակցված են, լրացնում են միմյանց և մշակութային ժառանգությունը կազմող արժեքները հնարավոր չէ պատկերացնել այդ գործընթացներից դուրս կամ առանց դրանցից մեկի: Վերոհիշյալ գործընթացներից յուրաքանչյուրն իր առանձնահատկությամբ ապահովում է այդ արժեքների լիարժեք պահպանությունը և տեղեկատվական համակարգերի ներդրումը, նվազագույնի է հասցնում այդ գործում առկա ռիսկերը, քանզի հիշյալ արժեքների վերաբերյալ տվյալների թվայնացման պարագայում դրանց հետ անմիջական շփման, հաղորդակցման անհրաժեշտության պահանջը պակասում է: Տվյալների շտեմարանի առկայության դեպքում շատ հարցեր արդեն հնարավոր են դառնում լուծել դրանում ներառված արժեքների տվյալների ուսումնասիրման, հետազոտման, վերլուծման, մշակման ճանապարհով՝ անկախ հեռավորությունից, և միայն խիստ անհրաժեշտության դեպքում են արդարացված դրանց հետ անմիջական շփումները: Եթե այս ամենին ավելացնելու լինենք նաև այն անվիճելի փաստը, որ ժամանակակից տեխնոլոգիաներն ապահովում են շատ արագ, արդյունավետ հաղորդակցություն և թույլ են տալիս մեծածավալ պահոցային (արխիվային, ֆոնդային) տվյալներն արխիվացնել ու պահպանել հազարապատիկ անզամ փոքրածավալ կրիչներով, ապա դրանց ներդրումն այս բնագավառում խիստ արդիական պետք է լինի: Բնական է, որ դա գիտակցում է ցանկացած երկրի կառավարություն: Թվում է, թե ոչ մի խնդիր չպետք է ծառանա կամ խոչընդոտի այս աշխատանքների իրականացմանը, սակայն իրականում միշտ չէ, որ հնարավոր են կյանքի կոչել ցանկությունները կամ իրականացնել անհրաժեշտ միջոցառումները, ինչպես դա շարունակաբար նկատելի է մշակույթի ոլորտում:

Հիշյալ ոլորտում ինչպես բոլոր տեխնիկական նորույթները, այնպես էլ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մշտապես ցանկալի, բայց և դժվար լուծելի խնդիր է եղել պետության համար: Այժմ այն մի տեսակ թանկ հաճույք կամ շքեղություն կարող է թվալ մեր երկրի պետական բյուջեի համար: Այնուամենայնիվ զարգացման ծրագրեր, խնդիրներ մշակելիս առաջին հերթին պետք է առաջնորդվել դրանց նպատակահարմարությունով, արդյունավետությամբ, հետագա զարգացման միտումներով: Իհարկե, ցանկացած ժամանակ տնտեսական գերակայությունների ընդունումը բավականին բարդ խնդիր է և, բնական է, որ դրանք առանձնացնելիս պետք է իրատեսորեն գնահատվեն սե-

փական հնարավորությունները, սակայն, կարծում ենք, ժամանակն է, որպեսզի համակարգված և արդյունավետ տեմպերով լուծվի մշակույթի ոլորտի տեխնիկական հագեցվածության և տեղեկատվական համակարգերի ներդրման խնդիրը: Նման մոտեցումներով ու լավատեսական մղումներով էլ պայմանավորված է ՀՀ մշակութային ժառանգության տեղեկատվական շտեմարանի ստեղծման սույն առաջարկը:

Նախ մի քանի խոսքով ներկայացնենք մշակութային ժառանգության մաս կազմող արժեքների թվայնացման ուղղությամբ մեր երկրում կատարված աշխատանքները, քանզի ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման հարցում միշտ աչքի ընկած Հայաստանը չէր կարող ընդհանուր զարգացման ուղուց դուրս մնալ կամ միայն դիտորդի դերում հանդես գալ կամ բավարարվել այդ դերով:

Մեր մշակույթի ոլորտում տեղեկատվական համակարգերի ներդրման ուղղությամբ ժամանակին համընթաց քայլեր միշտ էլ իրականացվել են: Սակայն տարբեր պատճառներով այդ գործընթացները միշտ էլ արդյունավետ չեն եղել, և ինչպես ժամանակն է ցույց տվել, ժամանակավրեպ են դարձել: Դեռևս 1980-ական թվականների սկզբներին Հայաստանը նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետ համընթաց փորձում է ստեղծել ԽՍՀՄ թանգարանային ֆոնդ: Մշակույթի նախարարության նախաձեռնությամբ թանգարաններում քննարկվեցին տարբեր բնույթի թանգարանային առարկաների նկարագրիչները, ստեղծվեցին տիպային քարտեր, և հավաքածուներն սկսեցին մշակվել այդ պահանջներով մինչև համապատասխան ծրագրի և տեխնոլոգիաների ներդրումը: Սակայն մինչև առաջարկված պահանջներով ծրագիր ստեղծելը, այն արդեն ընդհանուր տեխնիկական առաջընթացից հետ էր մնացել: Եվ շուտով ԽՍՀՄ-ը փլուզվեց, թե՛ թվայնացման ծրագրի ստեղծումը, թե՛ բուն թվայնացման գործընթացը դադարեցվեց:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի իրավիճակի վերլուծությունը վկայում է, որ հետագայում Հայաստանում ինչպես շատ այլ, այնպես էլ այս ոլորտի զարգացման դաշտում տեղի է ունեցել վերակողմնորոշում՝ դեպի եվրոպական համագործակցության ասպարեզ: Հայաստանի Հանրապետությունում 2000 թվականից որոշակի քայլեր են կատարվել այս ուղղությամբ: Համաշխարհային բանկի Ջարգացման գերատեսչական հիմնադրամի ֆինանսական օժանդակությամբ «Հայաստան» համահայկական հիմնադրամը նախաձեռնեց և ստեղծեց Հայաստանի թանգարանային առարկաների թվայնացման ծրագիր: Այն ուներ համաթանգարանային ընդգրկում և նախատեսված էր տարբեր բնույթի ու տեսակի թանգարանային առարկաների թվայնացման համար: Միաժամանակ ծրագրի ներդրման և փորձարկման նպատակով շուրջ երկու տասնյակ կազմակերպությունների տրամադրվեց հավաքածուները թվայնացնելու տեխնիկա, շատ աշխատակիցներ վերապատրաստվեցին ծրագրով աշխատելու համար և, վերջիններիս օգնությամբ, թվայնացվեցին այս աշխատանքներում ընդգրկված կազմակերպությունների տարբեր բնույթի մոտ հինգ հազար արժեքների տվյալներ: Սկզբնական շրջանում ի հայտ եկան որոշակի տեխնիկական բարդություններ, որոնց վերացման համար մշակվեցին անհրաժեշտ միջոցառումներ և փորձ արվեց շարունակաբար դրանք կարգավորել, սակայն այդ աշխատանքները հետագայում չհամակարգվեցին և դադարեցվեցին:

Հետագա տարիներին մշակույթի նախարարությունն իր ենթակայությամբ գործող կազմակերպություններին հնարավորության սահմաններում պարբերաբար ապահովել է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով: Այժմ շատ պահոցներ ունեն թե՛ հավաքածուները թվայնացնելու տեխնիկա, թե՛ համապատասխան ծրագիր: Այնուամենայնիվ թվայնացման աշխատանքները դանդաղ են ընթանում: Տեղեկատվական տեխնոլոգիաներն էլ շարունակաբար զարգանում և կատարելագործվում են, իսկ հիշյալ ծրագիրը մնացել է ստեղծման մակարդակին և այժմ արդեն չի կարող բավարարել խոշոր կազմակերպությունների պահանջներն ու առաջացած խնդիրները: Միաժամանակ ծրագրի ուսուցումն անցած շատ աշխատակիցներ այժմ չեն աշխատում, իսկ շատերը, մասնավորապես հին սերնդի մասնագետները, ծրագրի հետ աշխատելու հմտություններ չունեն: Հարկ է նշել նաև, որ վերջին հանգամանքը հաշվի առնելով՝ կազմակերպությունների հիմնական մասը որդեգրեց սխալ քաղաքականություն՝ սեփական մասնագետների ուսուցանման փոխարեն ընտրելով հավաքածուների տվյալները մուտքագրող օպերատորների հաստիքներ ստեղծելու գործելակերպ: Վերջինիս հետևանքով հիշյալ արժեքների մշակման գիտական և տեխնիկական գործընթացները մեխանիկորեն տարանջատվեցին: Փաստորեն օրգանական ամբողջություն կազմող գործընթացը երկփեղկվեց: Դա միայն բացասական հետևանքների հանգեցրեց, մինչդեռ հակառակը պետք է լիներ, քանի որ տեղեկատվական համակարգերի օգնությամբ կարելի է հայտնաբերել և վերացնել որոշ գործընթացներում առկա թերությունները: Վերոհիշյալ երևույթների պատճառով մշակութային ժառանգության արժեքների թվայնացման գործընթացը թե՛ նախագծային, թե՛ տեխնիկական առումներով խաթարվեց: Հետևաբար, եթե այժմ այդ գործընթացներն ինչպես հարկն է չհամակարգվեն, ապա ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի ներդրման գործն արժանանալու է նախորդ փորձերի ճակատագրին՝ բարոյապես հետ մնալով առաջընթացից: Դրան կարող է նպաստել նաև այն փաստը, որ հիշյալ կազմակերպություններից մի քանիսը հանդես են բերել սեփական սկզբունքներով շտեմարան ստեղծելու նախաձեռնություն, իսկ մի մասը գործում է տարբեր գերատեսչությունների ենթակայությամբ և այս ուղղությամբ գրեթե քայլեր չի արել կամ չի անում:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև ոչ պակաս կարևոր մեկ այլ խնդրի: Խոսքը հայոց մշակութային ժառանգության արժեքների տվյալների թվայնացման համապետական միասնական ձևաչափի, համակարգված մոտեցումների և միասնական շտեմարանի բացակայության մասին է: Այսօր մեր երկրում գործում են հայոց մշակութային ժառանգության արժեքներ պահպանող մասնագիտացված շուրջ 7 տասնյակ կազմակերպություններ, որոնց կեսն ունի պահպանվող արժեքների տվյալները թվայնացնելու էլեկտրոնային հենքային համակարգ, և ինչ-որ չափով դրանք ապագայում կարող են հասանելի դառնալ հանրությանը: Այդուհանդերձ պետք է նշել, որ վերոհիշյալ կազմակերպություններում գործող տեղեկատվական համակարգերը թերևս ստեղծված են տարբեր սկզբունքներով և դրանցից շատերն օժտված են միայն սեփական օգտագործման հնարավորությամբ: Այս, ինչպես նաև այն հանգամանքը, որ նման կազմակերպությունների մի մասի համար սեփական կայքի ստեղծումը մոտ ապագայում անիրագործելի է, դժվարացնելու են մեր մշակութային ժառանգության ողջ կազմն ու բովանդա-

կությունը ճշգրտելու խնդիրը: Դա մեծապես խանգարելու է տեղեկատվության արագ և արդյունավետ ստանալուն, հետևաբար՝ նաև դրա մշակմանն ու կառավարմանը: Բազմաթիվ կազմակերպություններում, ինչպես նաև շատ ֆիզիկական անձանց մոտ առկա են հետաքրքրություն ներկայացնող մշակութային արժեքներ, որոնք գրեթե աննատչելի են հանրությանը՝ խաթարելով հայոց մշակութային ժառանգության ամբողջական պատկերը: Եթե անգամ լինենք խիստ լավատես և մտածենք, որ մեր մշակութային ժառանգությունը պահպանող բոլոր կազմակերպությունները մոտ ապագայում թվայնացնելու են իրենց հավաքածուները և ունենալու են սեփական կայք, ապա միևնույն է, երկիրը չի ունենալու հիշյալ ժառանգության բովանդակային ամբողջական ցուցակը: Իհարկե, կան դրա քանակային ցուցանիշները, սակայն ողջ ժառանգության համահավաք, մեկ ամբողջական բովանդակային ցուցակը չկա: Վերջինիս բացակայության պարագայում մշակութային ժառանգությունը որոշակիորեն դառնում է թերբացահայտելի, դժվար հասանելի և ինչ-որ առումներով մնում է ոչ լիարժեք համակարգելի ու կառավարելի: Այս հանգամանքն իր բացասական ազդեցությունն է թողնում նաև դրա պահպանության, զարգացման և հանրահռչակման գործընթացների վրա: Ուստի ԶԶ կառավարությունում և մշակույթի նախարարությունում պետք է շահավետ քայլեր կատարվեն հիշյալ բացը լրացնելու և այս ուղղությամբ ոլորտի զարգացումն ապահովելու համար: Այդ նպատակով առաջարկվում է ստեղծել հայոց մշակութային ժառանգության տեղեկատվական շտեմարան՝ անկախ այդ ժառանգության մասը կազմող արժեքների գերատեսչական ենթակայությունից և սեփականությունից: Ի տարբերություն գոյություն ունեցող շտեմարանների, որոնք, այսպես ասած, խիստ «ճյուղային» բնույթ ունեն, առաջարկվող շտեմարանը պետք է ներառի մեր ողջ մշակութային շարժական ժառանգությունն՝ անկախ առանձին արժեքների բովանդակային առանձնահատկություններից: Այն ստեղծելիս, կարծում ենք, որպես սկզբունք պետք է հիմք ընդունել մշակութային ժառանգության արժեքների ոչ թե մեկ-երկու առանձնահատկություն, տարբերակող նկարագրիչ, այլ դրանց ընդհանրությունները: Ի վերջո դրանք միավորվում են միևնույն՝ «թանգարանային առարկա» հասկացության ներքո և մեկ-երկու առանձնահատկությունից զատ՝ ունեն բազմաթիվ ընդհանրություններ: Դետևաբար առավել տրամաբանական և դյուրին է դրանց միավորումը, քան տարանջատումը:

Բնական է, որ շտեմարանների ստեղծման յուրաքանչյուր սկզբունք ունի իր առավելություններն ու թերությունները: Առաջարկվող շտեմարանի պարագայում, կարծում ենք, նախընտրելի է ընդհանրությունների հիման վրա դրանց միավորումը: Այդ իսկ առումով էլ հիշյալ շտեմարանը պետք է ընդգրկի Հայաստանի Հանրապետության թանգարանային, արխիվային, գրադարանային տեղեկատվական հավաքածուների, ինչպես նաև հիմնարկներին ու կազմակերպություններին որպես զույք ամրացված առանձին մշակութային արժեքների և իրավաբանական ու ֆիզիկական անձանց մոտ պահպանվող պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքների պահպանական ցուցակի չափորոշիչներին համապատասխանող մշակութային արժեքների տեղեկատվությունը: Շտեմարանի նման տարաբնույթ ընդգրկման մտահղացումն ունի նաև ընդդիմադիրներ, որոնց կարծիքով հնարավոր չէ այդ բոլորի համատեղումը: Առա-

ջին հայացքից թվում է, թե արտահայտված կասկածանքը տեղին է: Իրականում այդ տեսակետը խիստ սուբյեկտիվ է՝ պայմանավորված որոշակի «անվստահության» կամ «վախի» հոգեբանությամբ, և ընդամենը՝ կենտրոնամետ, միասնական ձևաչափերի գաղափարներ չընդունելու պարզ արտահայտություն է, ինչն այնքան էլ ցանկալի չէ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրարկման պարագայում: Բոլորիս քաջ հայտնի է, որ շատ-շատ պահոցներում պահպանվում են թե՛ «իրային», թե՛ «գրքային», թե՛ «փաստաթղթային-արխիվային», թե՛ «կինո-ֆոտո-ֆոնո», թե՛ «գեղարվեստական», մի խոսքով՝ բազմաբնույթ նյութեր, և դրանք նույն ծրագրով արդեն իսկ թվայնացվում են: Միաժամանակ հարկ է նշել, որ առաջարկվող շտեմարանը պետք է ունենա տարբեր պահոցների տարաբնույթ նյութերն իր ծրագրի ձևաչափին համապատասխանեցնող ծրագիր, հետևաբար վերևում հիշատակված՝ բազմաբնույթ նյութերի անհամատեղելիության մասին կասկածանքն անտեղի է և լուծելի:

Ի տարբերություն առանձին կազմակերպությունների շտեմարանների՝ առաջարկվող համապետական շտեմարանը պետք է ներառի մշակութային շարժական ժառանգության արժեքների վերաբերյալ հիշյալ կազմակերպությունների շտեմարանների միայն հրապարակման ենթակա թվայնացված տվյալները (ընդհանուր տեղեկություններ, նկարագրություն, դասակարգում, պատմություն, տեխնիկական բնութագիր): Դա նախատեսվում է նախ՝ ցանկացողներին մեկ կայքում հայոց մշակութային ժառանգության վերաբերյալ ամբողջական պատկերացում տալու, ինչպես նաև նրանց՝ անհրաժեշտ նյութերին առավել խորը ծանոթանալու համար վերջիններիս գտնվելու հասցեներով ուղղորդելու նպատակով:

Շտեմարանի հիմնական նպատակը Հայաստանի մշակութային ժառանգության արժեքների վերաբերյալ տեղեկատվության պահպանման, ուսումնասիրման ու հանրահռչակման արդյունավետության բարձրացումն է, այդ տեղեկատվության հավաքման, միասնական ձևաչափով համակարգման, հանրության լայն խավերին հասանելի ու մատչելի դարձնելու, ինչպես նաև նրանց՝ դեպի այդ արժեքները պահպանող կազմակերպությունները կամ սեփականատերերը ուղղորդելու գործընթացների համակարգումն է: Առաջարկվող նախագծի համաձայն՝ շտեմարանը կունենա երկրի մշակութային արժեքների վերաբերյալ տվյալները համապատասխանեցնող ծրագիր, սպասարկող հանգույց (սերվեր) և կայք, որը միասնական հենքային վեբ միջերեսի (ինտերֆեյսի) միջոցով հնարավորություն կտա ստեղծելու մշակութային ժառանգության ողջ պատկերն ու կօժանդակի արդյունավետ կազմակերպելու դրա տվյալների շահագործումը:

Ի վերջո, մշակութային ժառանգության համապետական տեղեկատվական շտեմարանը լուծում է պահպանական շատ խնդիրներ: Այն, ինչպես նաև առանձին կազմակերպությունների շտեմարաններն, ըստ էության, պահպանիչ կահավանակի դեր են կատարելու մշակութային արժեքների համար՝ պակասեցնելով դրանց հետ շփումների աստիճանը: Եթե մենք այս առումով դիտարկենք պահպանական խնդիրները, ապա պահոցներում կատարվող ցանկացած աշխատանք միտված է հաշվառված օբյեկտների պահպանությանը: Այսպես՝ օբյեկտների գրանցման գործընթացը՝ մշակութային արժեքների պահպանական ցուցակում դրանք ներառելու իրավական փաստաթղթային հիմքերի ստեղծումն է,

հաշվառումն ու վերահաշվառումը՝ առկայության, պահպանված լինելու արձանագրումն է, ուսումնասիրումն ու գիտական մշակումը՝ արժեքների, որպես այդպիսին լինելու, համապատասխան նկարագրիչներն ունենալու փաստագրումն է, ամրակայումն (կոնսերվացում) ու վերականգնումը՝ առկա պահպանվածության վիճակի կամ ամբողջական տեսքի ապահովումն իրագործող գործընթացներն են: Մշակութային արժեքների ցուցադրումն ու հրապարակումն անգամ պետք է դիտարկել պահպանական, ինչ-որ տեղ պաշտպանական հզոր գործառույթ ներառելու տեսանկյունից, քանզի այդ միջոցներով դրանց համապատասխան չափորոշիչներով ներկայացվում-փաստվում են՝ վերջիններս ապահովագրելով բնատարածքային, էթնիկ պատկանելության հետագա խեղաթյուրումներից, սեփականության իրավունքի փոխանցման անօրինական գործընթացներից:

Ի վերջո, շտեմարանը տեղեկատվության արագ և արդյունավետ հասանելիությունն ու մատչելիությունն ապահովելու, դրա կառավարման գործընթացը դյուրացնելու լավագույն, անփոխարինելի միջոց է: Բացի այդ, շտեմարանի օգնությամբ տարբեր ծրագրերով աշխատող կազմակերպությունները դառնում են խիստ հասանելի ու մատչելի, իսկ մշակութային արժեքների տեղեկատվությունը՝ եկամտաբեր:

#### **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Բայադյան Դ.** Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների տարածումը և զարգացումը Հայաստանում, Ե., 2005:

#### **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ**

[www.google.am](http://www.google.am) – տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ

[www.google.com](http://www.google.com) – база данных

#### **РОЛЬ ИНФОРМАЦИОННОЙ БАЗЫ В ДЕЛЕ ПОПУЛЯРИЗАЦИИ И СОХРАНЕНИИ КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ**

**А. С. ХАЧАТРЯН**

Учитывая прогресс современных информационных технологий и их возможности по обеспечению быстрой и эффективной информации, предлагается на базе организаций сохраняющих культурные объекты, создать республиканскую информационную базу армянского культурного наследия, что одновременно обеспечит сверх быструю доступность и облегчит их управление и систематизацию.

# THE ROLE OF THE INFORMATION GUIDE BOOK IN PRESERVING CULTURAL HERITAGE AND MAKING THEM POPULAR

A. S. KHACHATRYAN

Taking into account the progress of the modern information technologies and the possibilities of providing effective information it is suggested to create national information guide book of Armenian cultural heritage which will create conditions for super fast availability and access and will make easier the control and systematization of the field.

## ԿԱՊԱՆ ԵՐԿԻՐՆ ԸՍՏ ՏԱԹԵՎԻ ՊՏՂԻ ՑՈՒՑԱԿԻ

Ա. Յ. ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս

Մատենադարանում պահվող Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության որոշ ձեռագրերում ավելացված է Տաթևի վանքին հարկատու գյուղերի մի նոր ցուցակ: Օգտվելով Ստեփանոս Օրբելյանի «Ժամանակագրության» հրատարակությունից, Ա. Գ. Աբրահամյանը տեղավորել է այդ ցուցակը նրա հավելվածում՝ վերցնելով N 6271 ձեռագրից: Ցուցակում նշված է Տաթևի թեմի 14 գավառների գյուղերից ստացվող «պտուղ» և «տասանորդ» հարկերի քանակը: Հավելվածում տեղ է գտել նաև Գեղարքունյաց մելիքների Տաթևի վանքին տրված Ղաբալան:<sup>1</sup>

Տաթևի թեմի պտղի ցուցակում նշված 14 գավառների ընդհանուր տարածքն իրենից ներկայացնում էր Ջանգեզուրի, Ղարաբաղի և Ղարադաղի լեռնաշղթաների ու եռակատար սարավանդի հյուսիսային եզրի միջև պարփակված մի ընդարձակ հայաբնակ երկրամաս, որը հայտնի էր Ղափան (իմա՝ Կապան) անունով:<sup>2</sup> Նշված երկիրը լեռնոտ և կտրտված տարածաշրջան է:

Երկրամասի համար տնտեսական կարևոր նշանակություն է ունեցել Արաքսի հովտով անցնող տարանցիկ ուղին, որին այն միանում էր Նախիջևանում:<sup>3</sup> Երկ-

<sup>1</sup> Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրպէլեանի, Ե., 1942, հավելված, էջ 41-45: Տաթևի թեմի պտղի ցուցակը վերաբերում է 1702-1720 թթ., սակայն, ամենայն հավանականությամբ, արտացոլում է նաև 17-րդ դ. երկրորդ կեսի իրավիճակը: Ըստ Յ. Հովսեփյանի՝ այդ ցուցակը վերաբերում է 16-րդ դ. սկզբներին, որովհետև արտագրված է 1513 թ. ձեռագրից (**Յ. Հովսեփյան**, Ղարադաղի հայերը, I, Ազգագրություն, Եր., 2009, էջ 141-142):

<sup>2</sup> Այդ անվան տակ առ այսօր հասկացվում էին տարբեր մեծության տարածքային երկու միավորներ՝ բուն Ղափան (Փոքր Ղափան) և Մեծ Ղափան, որը կոչվել է նաև «Յոթնաբերդ գավառ» (**Թ. Խ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր, 1984, էջ 365): Ըստ պարսկական աղբյուրների՝ Ղափանաթ (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Եր., 1972, էջ 190, ծան. 116):

<sup>3</sup> Հայ ժողովրդի պատմություն, էջ 82: 18-րդ դ. առաջին քառորդի դրությամբ Նախիջևանը